Արևմուտքը Ալիևին «խարազան» է ցույց տալիս

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 28.04.2024թ.

25.04.2024 թ. Եվրախորհրդարանը բանաձև է ընդունել Ադրբեջանում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, որում Եվրահանձնաժողովին կոչ է արվում դադարեցնել էներգետիկ համագործակցությունը Ադրբեջանի հետ, և այս երկրի հետ հետագա ցանկացած համագործակցությունը պայմանավորել քաղբանտարկյալների ազատ արձակմամբ և մարդու իրավունքների ընդհանուր վիճակի բարելավմամբ: Բանաձևում նաև նշվում է Կլիմայի միջազգային համաժողովի COP29 նստաշրջանի մասին, որը պետք է անցկացվի Բաքվում: ԵՄ բարձրագույն օրենսդիր մարմինը պահանջում է այս նշանակալից իրադարձությունն Ադրբեջանում անցկացնելու իրավունքից զրկել Բաքվին, եթե ադրբեջանական իշխանությունները շարունակեն այլախոհների իրավունքները ոտնահարելու քաղաքականությունը և քաղաքական հակառակորդների դեմ պայքարի պատժիչ մեթոդներ կիրառեն:

Եվրախորհրդարանի կողմից ընդունված փաստաթուղթը չի ենթադրում ԵՄ գործադիր կառույցների կողմից ուղղակի պատժամիջոցներ Ադրբեջանի դեմ և ունի հանձնարարական բնույթ՝ Եվրահանձնաժողովի ուշադրությունը գրավելու Ադրբեջանում ժողովրդավարական արժեքներին վերաբերող իրավիճակի վրա: Ըստ կանոնակարգի՝ Եվրահանձնաժողովն ինքը պետք է որոշի Բաքվի հետ կապված գործողությունների ընտրության հարցը, սակայն պարտավոր է հաշվի առնել խորհրդարանական մարմնի կարծիքն ու տրամադրությունները:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ծայրահեղ անբարենպաստ, բայց, միևնույն ժամանակ, զուտ դեկլարատիվ փաստաթղթի ընդունման փաստը վկայում է այն մասին, որ ԵՄ-ն կանխարգելիչ միջոցներ է ցուցաբերում Բաքվի նկատմամբ: Դրանք, ենթադրաբար, կապված են ոչ թե Ադրբեջանում իրավական ճգնաժամի և կառավարման ավտորիտար մեթոդների վերաբերյալ անկեղծ մտահոգության հետ, մի բան, որ Արևմուտքը համառորեն անտեսել է երեք տասնամյակ շարունակ, այլ՝ աշխարհաքաղաքական գործոններով:

Խոսքը կարող է լինել եվրոպական հանրության՝ Ալիևի Ադրբեջանի դեպի Ռուսաստան հնարավոր շեղման մտահոգությունների կամ, առնվազն, «երկու հեռվացող աթոռների վրա» նստելու և ռուս-արևմտյան հակադրությունից «Էրդողանյան սցենարով» առավելագույն դիվիդենտներ ստանալու նրա փորձի մասին:

Այս լույսի ներքո ամենևին էլ պատահական չէ, որ Եվրախորհրդարանի բանաձևն ընդունվել է 2024 թ. ապրիլի 22-ին Ալիևի Մոսկվա կատարած այցից անմիջապես հետո: Ռուսաստանյան և ադրբեջանական ԶԼՄ-ների փոխանցմամբ՝ Ի. Ալիևը և Վ. Պուտինը պայմանավորվածություն են ձեռք բերել հարցերի լայն շրջանակի շուրջ և

համաձայնեցրել իրենց դիրքորոշումները միջազգային օրակարգի բազմաթիվ հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, նրանց բանակցությունների հիմնական թեմաներից է եղել Հյուսիսային ծով–Կասպից ծով–Պարսից ծոց առանցքով Հյուսիս-Հարավ մայրցամաքային երթուղու նախագծում համատեղ ներդրումների հարցը: Քննարկվել է նաև Ռուսաստանից Չինաստան նոր ճանապարհային և էներգետիկ հաղորդակցությունների ստեղծմանը Բաքվի հնարավոր մասնակցության հարցը: Հնարավոր է նաև, որ բանակցությունների օրակարգում ներառված է եղել Ղարաբաղյան հիմնախնդրի ուժային լուծման արդյունքում ստատուս քվոյի փոփոխությունից հետո Հարավային Կովկասում հավաքական Արևմուտքի ազդեցության ուժեղացումը կանխելու համատեղ միջոցառումների թեման:

Վերոնշյալ բոլոր կետերի վերաբերյալ ԵՄ-ն ունի պահանջներ, քանի որ եթե դրանք իրականության վերածվեն, ապա ստեղծվում է տարիմաստ իրավիճակ. Ադրբեջանը, որի ղարաբաղյան ագրեսիայի և ավտորիտարիզմի վրա երկար ժամանակ աչք է փակել Եվրոպան, որին հնարավորություն է տվել դեպի Հին աշխարհ տանել իր նավթագազային խողովակաշարերը և հարստացրել է սեփական պայմանագրերով, մերձեցման հստակ նշաններ է ցուցադրում Արևմուտքի հանդեպ թշնամաբար տրամադրված ՌԴ-ի, ԻՀԻ-ի և ՉԺՀ-ի հետ:

2024 թ. ապրիլի 23-ին Բաքվի միջազգային ֆորումում Ալիևի ելույթը, որի ընթացքում Ռուսաստանի հետ արյունալի պատերազմի մեկնարկի համար նա փաստացի պատասխանատվությունը դրեց Ուկրաինայի ներկայիս և նախորդ իշխանությունների վրա, հազիվ թե վրիպեր եվրոպացի քաղաքական գործիչների ուշադրությունից: Եվ դա չնայած այն հանգամանքին, որ այսօր ուկրաինական հակամարտության վերաբերյալ դիրքորոշումը համարվում է ուժի գլոբալ կենտրոններ սիրաշահելու նշան: Այս համատեքստում հարկ է նշել, որ նախկինում Ի. Ալիևի մոտ չի նկատվել նման «համարձակ» գնահատական և «մեղավորի» բացահայտում՝ ի դեմս ուկրաինական արևմտամետ իշխանությունների:

Ամեն դեպքում, ԵՄ-ի զգուշավորությունն ունի կոնկրետ պատճառներ, որոնք ստիպում են իրեն նյարդայնանալ և ազդանշան տալ Բաքվին, որ պատրաստ է դիմելու պատժամիջոցների: Նույն դրդապատճառները բարձր հավանականությամբ կարող են բացատրել նաև Վաշինգտոնի կանխարգելիչ գործողությունները Ալիևի ռեժիմի դեմ: Միակ տարբերությունն այն է, որ ԱՄՆ-ի իշխանությունները Բաքվին ակնարկեցին նրա պատժի ընթացակարգը սկսելու հնարավորության մասին ոչ թե Ալիևի Մոսկվա այցից հետո, այլ դրանից առաջ: Ակնհայտ է, որ Վաշինգտոնը նախապես գիտեր Պուտին-Ալիև բանակցային օրակարգի մասին և միտումնավոր փորձում էր ազդել վերջինիս դեպի իրանա-ռուսական ձևաչափի շեղման վրա:

Հիշեցնենք, որ վերջերս ԱՄՆ-ի իշխանությունները ընդդիմադիր ադրբեջանցի լրագրող Ալեքս Ռաուֆօղլուի միջոցով կազմակերպել էին գաղտնի տեղեկատվության «արտահոսք», ըստ որի՝ երկու կուսակցություններից մի խումբ ամերիկացի կոնգրեսականներ պատրաստվում են քվեարկել 40 ադրբեջանցի պաշտոնյաների և զինվորականների նկատմամբ անձնական պատժամիջոցների մասին օրինագծի շուրջ: Ավելին, այդ անձինք մեղադրվում են ոչ միայն Ի. Ալիևի ավտորիտար վարչակարգին աջակցելու, այլև՝ Լեռնային Ղարաբաղի խաղաղ հայ բնակչության դեմ ռազմական հանցագործությունների մեջ: Ցուցակում ընդգրկված են բանակի սպաներ՝ գեներալի աստիճանից մինչև լեյտենանտներ, սահմանապահներ, հատուկ ծառայությունների աշխատակիցներ, Ալիևի գրասենյակի ներկայացուցիչներ, դատախազներ և դատավորներ:

Այսպիսով, Արևմուտքը «գազարի» փոխարեն «խարազան» է ցուցադրում: Առայժմ միայն ցուցադրում է՝ Ալիևի արձագանքի ակնկալիքով, որից, ըստ էության, կախված կլինի կոնգրեսականների քվեն: